

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱՆԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՂԱԲԵԿՑԱՆ**

**ԲԱԶՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՆՁՑՈՒՆԱԿԱՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԲՐԻՏԱՆԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԹՈՔ-ՇՈՈՒՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Ժ.02.07- «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման

**ՄԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2026**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.թ., դոցենտ Բաղդասարյան Սեդա Արտեմի

Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Հարությունյան Լուսինե Արմենի  
բ.գ.թ, դոցենտ Գյուրջայանց Սեդա Միխայիլի

Առաջատար  
կազմակերպություն՝

Ռուս-հայկական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի ապրիլի 8-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. մարտի 5-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Գայանե Մուրադյան



Բանավոր խոսույթի գանազան ձևերի ուսումնասիրությունը ժամանակակից լեզվաբանության արդի ուղղություններից մեկն է: Լեզվաբանական ուսումնասիրությունները հիմնականում կարևորել են երկխոսական խոսքը, մինչդեռ բազմախոսությունը մինչև վերջերս չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Պե՞տք է արդյոք բազմախոսությունն առանձացնել որպես խոսքային գործունեության առանձին տեսակ, թե՞ դիտել որպես երկխոսության մասնավոր տարատեսակ, դեռևս քննարկման առարկա է: Բազմախոսական խոսույթի ուսումնասիրությունը չափազանց հետաքրքիր է, քանի որ բազմակողմանի հաղորդակցությունը բխում է ժամանակակից կյանքի պահանջներից և դրանում ներգրավված մարդկանց համատեղ գործունեության և փոխհարաբերությունների կազմակերպման միջոց է:

Բազմակողմանի հաղորդակցությունը հետաքրքիր դրսևորում է ստանում քաղաքական խոսույթում՝ պայմանավորված վերջինիս առանձնահատկություններով: Կարևորելով համատեքստի և առոգանության փոխադարձ կապվածությունը՝ բավականին հետաքրքիր է քաղաքական-հասարակական բազմախոսությունների առոգանությունը, որը դիտվում է քաղաքական զարգացումների համատեքստում: Ատենախոսության մեջ ուսումնասիրվում են բազմախոսության՝ որպես խոսքային գործունեության համագործակցային և կոնֆլիկտային ռազմավարությունների հնչյունական և գործաբանական առանձնահատկությունները: Այլ կերպ՝ մեր ուշադրության կենտրոնում բանավոր բազմակողմանի հաղորդակցությունն է քաղաքական խոսույթում:

Չնայած այն փաստին, որ վերջին տարիներին մեծ թափ է ստացել բազմախոսությունների ուսումնասիրությունը, դրանք հիմնականում դիտարկվել են գրավոր տեքստերի հիման վրա, իսկ հանպատրաստից բազմախոսական խոսքային գործունեությունը գրեթե ուշադրության չի արժանացել: Մասնագիտական գրականության մեջ որոշ փորձեր արվել են վերհանելու բազմախոսությունների հնչյունական և գործաբանական առանձնահատկությունները, այդուհանդերձ հեռուստատեսային խոսույթի ժանրերը երբեք ուշադրության առարկա չեն հանդիսացել: Թոք-շոուների՝ որպես բազմախոսությունների հնչյունական և գործաբանական վերլուծությունը բացահայտում է տվյալ ժանրին բնորոշ բազմախոսությունների կիրառման առանձնահատկությունները:

Կարևոր է նշել, որ հեռուստատեսությունն իրականության ներկայացման և հեռուստադիտողի աշխարհընկալման ձևավորման ամենակատարյալ ձևերից է: Արտացոլելով վերոնշյալ միտումները՝ հեռուստատեսության փոխներգործուն հաղորդումներում հաճախ է դիտվում բազմախոսական հաղորդակցություն, որը հատկապես կարևոր է քաղաքական խոսույթում: Ահա՛ նշված գործոններով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ընտրությունը:

Աշխատանքի **նպատակն** է վերհանել բարդ հաղորդակցական և լեզվամշակութային երևույթի՝ բազմախոսության լեզվական և արտալեզվական հատկանիշները, առանձնացնել և նկարագրել այն հնչերանգային միջոցները, որոնց գործածությամբ խոսողը քաղաքական-հասարակական թոք-շոուների հիման վրա իրագործում է հաղորդակցական ռազմավարություններն ու մարտավարությունները:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

1. դիտարկել խոսքային գործունեության տեսակները՝ մենախոսությունը, երկխոսությունը և բազմախոսությունը, վերհանել դրանց առանձնահատկությունները,

2. առանձնացնել բազմախոսության՝ որպես խոսքային գործունեության առանձին միավորի տեսական հիմունքները,

3. ուսումնասիրել բազմախոսությունները քաղաքական խոսույթում, մասնավորապես՝ քաղաքական-հասարակական բնույթի թոք-շոուներում,

4. վերհանել քաղաքական-հասարակական բազմախոսությունների մասնակիցների դերային բաշխումը,

5. բացահայտել ռազմավարությունները, որոնք հատուկ են համագործակցային և կոնֆլիկտային բազմախոսական խոսույթին,

6. հաստատել համագործակցային և կոնֆլիկտային բազմախոսական խոսույթի հնչերանգային ցուցիչները, դիտարկել բազմախոսական խոսքի հնչերանգային առանձնահատկությունների կախվածությունը մասնակիցների դերերից, համադրել բառաքերականական միջոցների և առոգանության ցուցիչները:

Հետազոտության գիտական **նորույթը** պայմանավորված է խմբային հաղորդակցության հնչերանգային առանձնահատկությունների համակարգային նկարագրությամբ: Աշխատանքում կատարվել է խոսքային գործունեության մենախոսական, երկխոսական և բազմախոսական ձևերի հակադրություն, ներկայացվել է հեռուստատեսային խոսույթի ժանրերի դասակարգումը, դուրս են բերվել թոք-շոու ժանրի լեզվական և արտալեզվական հատկանիշները, թոք-շոուն դիտարկվել է որպես բազմախոսություն: Նաև՝ տրվել է քաղաքական-վերլուծական բնույթի խոսույթում համագործակցային և կոնֆլիկտային ռազմավարությունների ու մարտավարությունների հնչերանգային նկարագիրը բազմախոսական բանավոր հաղորդակցության ընթացքում: Չնայած այն փաստին, որ քաղաքական խոսույթի քերականական, բառային և խոսույթային առանձնահատկությունները լայնորեն լուսաբանվել են, այդուհանդերձ երևույթի հնչյունագործաբանական կողմը չի արժանացել նմանատիպ ուշադրության: Աշխատանքում փորձ է արվել համադրել լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծությունների տվյալները ուսումնասիրության ճշգրտությունն ապահովելու համար:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է բազմախոսական հաղորդակցության առանձնահատկությունների, մասնավորապես՝ մասնակիցների արդյունավետ փոխազդեցությունն ապահովող հնչերանգային և գործաբանական միջոցների փոխհարաբերության նկատմամբ աճող հետաքրքրությամբ և խմբային հաղորդակցության հնչերանգային առանձնահատկությունների հետազոտությունների սակավաթվության փաստով: Արդիականությունը պայմանավորված է նաև թոք-շոու ժանրի և հատկապես՝ քաղաքական-հասարակական թոք-շոուների նկատմամբ ժամանակակից հասարակության աճող հետաքրքրությամբ: Հաղորդակցական ռազմավարությունների տեղին գործածությունը և՛ ներհասարակական, և՛ միջազգային հաջողված հաղորդակցության գրավականներից է:

Տվյալ հետազոտության **տեսական արժեքը** պայմանավորված է նրանով, որ աշխատանքի արդյունքները նպաստում են հեռուստատեսային խոսույթի ժանրերի կադապարման խնդրի հետագա մշակմանը՝ հաշվի առնելով հեռուստահաղորդակցման փոխներգործուն բնույթը: Աշխատանքում հիմնավորվում է հնչերանգային միջոցների կախվածությունը խմբային հաղորդակցման մասնակիցների հասարակական-դերային և հոգեբանական առանձնահատկություններից: Ուսումնասիրության ընթացքում առանձնացվել և խմբավորվել են համագործակցային և կոնֆլիկտային խոսույթային ռազմավարություններն ու մարտավարությունները և դրանց իրագործման հնչերանգային միջոցները՝ ըստ կոնկրետ մասնակիցների և բազմախոսություններում նրանց ստանձնած դերերի:

Հետազոտության **գործնական արժեքն** այն է, որ ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել ընդհանուր լեզվաբանության, գործաբանության, գործնական և տեսական հնչյունաբանության, խոսույթի և մեդիախոսույթի դասընթացներում, ինչպես նաև հնչյունագործաբանության խնդիրներին նվիրված հատուկ դասընթացներում: Աշխատանքը կարող է նպաստել սովորողների հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանը, մասնավորապես՝ բազմախոսական հաղորդակցության ընթացքում, որն իր հերթին կնպաստի մասնագիտական ոլորտում կիրթ մշակույթի ձևավորմանը՝ օգնելով հաղթահարել հաղորդակցական պատենշները:

Ատենախոսության **մեթոդաբանական հիմքը** պայմանավորված է միջգիտակարգային մոտեցմամբ, որը համադրել է այնպիսի ուղղությունների հասկացութային համակարգը և մեթոդաբանությունը, ինչպիսիք են՝ գործալեզվաբանությունը, գործահնչյունաբանությունը, խոսքային ակտերի տեսությունը, խոսույթի վերլուծությունը, խմբային հաղորդակցական տեսությունը: Միջգիտակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս կենտրոնանալու այնպիսի հասարակական, հոգեբանական, գործաբանական, գաղափարախոսական գործոնների վրա, որոնք սահմանում են բազմախոսությունների մասնակիցների համագործակցային կամ կոնֆլիկտային

հաղորդակցությունն ու առոգանական նկարագիրը: Կախված ուսումնասիրության բնույթից՝ օգտագործվել է մեթոդների հնչյունական (ընկալողական, լսողական, էլեկտրաակուստիկ (Praat v.5.1.) վերլուծություն) համախումբ, ինչպես նաև իրականացվել է խոսույթային և գործաբանական վերլուծություն, որին հաջորդել է արդյունքների լեզվաբանական մեկնաբանությունը և քանակական նկարագիրը:

Ուսումնասիրության **ուղղորդ** բազմախոսությունն է քաղաքական-հասարակական ժանրի թոք-շոուներում: Ուսումնասիրության **առարկան** բազմախոսական խոսքի գործաբանական և հնչյունական առանձնահատկություններն են, որոնք դիտարկվում են հասարակական-քաղաքական ժանրի թոք-շոուներում: Ուսումնասիրության **նյութը** բրիտանական հեռույալ թոք-շոուններն են. 2011-2024թթ. BBC հեռուստաընկերության թոք-շոուններ BBC Newsnight և Dateline London, ITV հեռուստաընկերության Good Morning Britain թոք-շոուն, ABC TV հեռուստաընկերության ABCQanda հաղորդումը, որոնք հասարակական-քաղաքական խոսույթի նմուշ-բազմախոսություններ են: Վերլուծության համար ընտրված նյութերը վերցված են վերոնշյալ հաղորդումների պաշտոնական YouTube-յան ալիքներից՝ ընդհանուր առմամբ 2 ժամ տևողությամբ:

Աշխատանքն ունի հետևյալ կառուցվածքը՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, գրականության ցանկ և հավելված:

**Ներածության** մեջ ներկայացված են ատենախոսության թեման, ուսումնասիրության ուղղորդ, առարկան, աշխատանքի գիտական նորույթը և արդիականությունը, սահմանված են աշխատանքի նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքն ու հետազոտության մեթոդները, հստակեցված են տեսական և գործնական արժեքները:

**Առաջին գլխի** (*Բազմախոսությունը՝ որպես խոսքային գործունեության ձև*) առաջին ենթագլխում (*Խոսքային գործունեության ձևերը և դրանց ընդհանուր ու տարբերակիչ հատկանիշները*) ներկայացված են խոսքային գործունեության տեսակները, դրանց առանձնահատկություններն ու բազմախոսությանը բնորոշ հատկանիշները, որոնք տարբերակվում են մենախոսությունից և երկխոսությունից, այդ կերպ հաստատելով բազմախոսության կարգավիճակը որպես խոսքային գործունեության առանձին ենթատեսակ: Երկրորդ ենթագլխում (*Բազմախոսությունների մասնակիցների դերային բաշխումը*) քննարկվում են բազմախոսություններում մասնակիցների դերերի բաշխման ատկա տարբերակները, և առաջարկվում է մասնակիցների դերերի բաշխման ավելի համապարփակ տարբերակ: Ըստ այդմ՝ նպատակահարմար է առանձնացնել բազմախոսությունների մասնակիցների հետևյալ դերերը՝ **1.մոդերատոր, 2.առաջնորդ (օբյեկտիվ և սուբյեկտիվ), 3.մեկնաբան (համագործակցող, խաղաղարար, հակադրվող)**: Երրորդ ենթագլխում (*Հացեագրումը բազմախոսություններում*) դիտարկվում են բազմախոսական հաղորդակցությանը հատուկ հասցեագրման և մասնակիցների փոխազդեցության տեսակները: Չորրորդ ենթագլխում (*Քաղաքական բազմախոսություններ*) ուսումնասիրվում են

բազմախոսությունները քաղաքական խոսույթի համատեքստում: Առանձնահատուկ կարևորություն ունի քաղաքական խոսույթի հիմնական նպատակը, այն է՝ պայքար իշխանության համար: Դրանով իսկ քաղաքական խոսույթը կոչված է համոզելու, գործողությունների դրդելու, տեսակետների վրա ազդելու: Հինգերորդ ենթագլխում (*Թոք-շոուն՝ որպես բազմախոսության տեսակ*) հեռուստատեսային թոք-շոու ժանրը դիտվում է որպես բազմախոսության տարատեսակ՝ դրա ժանրային առանձնահատկությունների և ընդունված դասակարգումների դիտարկմամբ: Առաջին գլխի վերջին՝ վեցերորդ ենթագլխում (*Ռազմավարությունները բազմախոսություններում*) քննարկվում են բազմախոսության հաղորդակցական ռազմավարությունները, դիտարկվում դրանց սահմանման և դասակարգման մոտեցումները, ներկայացվում է քաղաքական խոսույթին հատուկ կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունների և մարտավարությունների քննադատական վերլուծությունը:

**Երկրորդ գլխի** (*Փորձառական-հնչյունական հետազոտության մեթոդաբանությունը*) առաջին ենթագլխում (*Գործաբանական վերլուծություն*) ներկայացվում է գործաբանական վերլուծության մոտեցումը, խմբավորվում և դասակարգվում են կոնֆլիկտային, համագործակցային ու չեզոք ռազմավարություններն ու մարտավարությունները: Երկրորդ ենթագլխում (*Առոգանության ուսումնասիրության գործաբանական մոտեցումը*) քննարկվում են առոգանության ուսումնասիրության ժամանակակից գործաբանական մոտեցումները: Խոսքում գործաբանական ազդեցությունները հիմնվում են «ի՛նչ է ասվել» և «ինչպե՛ս է ասվել» գործոնների միահյուսման վրա, որը փաստում է գործաբանության ու առոգանության անքակտելի կապը<sup>1</sup>:

Հաղորդակցության գործընթացի հաջողվածությունը ենթադրում է «ներգրավված մասնակիցների կողմից համատեքստի գնահատում, այսինքն՝ երբ նրանք առաջինը ճանաչում են ասույթի ուղիղ իմաստը, և ապա՝ վերացնում որևէ անուղղակի իմաստի երկվությունը»<sup>2</sup>: Առանձնացնելով արտահայտչական հնչերանգ և վերաբերմունքային հնչերանգ հասկացությունները՝ նշվում է, որ առաջինն արտահայտում մաքուր հույզեր և հավատալիքներից բխող հույզեր, որոնք ծագում են գիտելիքից և կարծիքից: Մյուս կողմից, վերաբերմունքային հնչերանգը հնչերանգի (նաև արտահայտչական հնչերանգի) այն հայեցակետն է, որը տրված համատեքստում արտահայտում խոսողի վարքը՝ ըստ խոսողի

---

<sup>1</sup> Wichmann, A., Dehé, N., Barth-Weingarten, D. (2009). Where Prosody Meets Pragmatics: Research at the Interface. Emerald Group Publishing Limited, 1–20. [https://doi.org/10.1163/9789004253223\\_002](https://doi.org/10.1163/9789004253223_002)

<sup>2</sup> Cabedo Nebot, A. (2021). Prosodic Modulation as a Mark to Express Pragmatic Values: The Case of Mitigation in Spanish. *Journal of Pragmatics*, 181, 196–208.

մտադրության կամ լսողի ընկալման<sup>3,4</sup>: Այս առումով գործաբանական ուսումնասիրություններում կարևորվում է հնչերանգի փոխլրացնող դերը, քանի որ այն հավելում է բառաբերականական միջոցներով արտահայտած իմաստներին<sup>5</sup> նպաստելով գործաբանական իմաստի ձևավորմանը: Մինևույն ժամանակ, կարևոր է շեշտել, որ հնչերանգը հաճախ անկախ է բառաբերականական միջոցներից, այսինքն արտահայտում է համատեքստով, հաղորդակցական իրավիճակով, մասնակիցների վերաբերմունքով և նպատակներով պայմանավորված իմաստ<sup>6</sup> այս կերպ հարաբերվելով ընդհանուր ենթադրությունների հետ<sup>7</sup>:

Երրորդից վեցերորդ ենթագլուխներում (*Ուսումնասիրության նյութը, Վերլուծության փուլերը, Վերլուծության մեթոդները և խնդիրները, Ընկալողական, լսողական և էլեկտրասահուստիկ վերլուծություն*) անդառաքած է կատարվում ուսումնասիրության նյութին, վերլուծության մեթոդներին և խնդիրներին, մանրամասն նկարագրվում են հնչյունագործաբանական վերլուծության փուլերը և մեթոդները:

**Երրորդ գլխի** (*Բազմախոսության կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունների առզանական նկարագիրը*) առաջին ենթագլխում (*Կոնֆլիկտային ռազմավարությունների առզանական նկարագիրը*) քննարկվում են քաղաքական-հասարակական բազմախոսությունների մասնակիցների կիրառած կոնֆլիկտային ռազմավարություններն ու մարտավարությունները: Կոնֆլիկտային ռազմավարություններով և մարտավարություններով հարուստ է BBC Newsnight հաղորդման 2011թ.-ի «The Whites Have Become Black»<sup>8</sup> թողարկումը: Թողարկումը նվիրված է 2011թ.-ին Լոնդոնում բռնկված խռովություններին և դրանց հետևանքներին: Տվյալ թոք-շոուին մասնակցում են պատմաբան Դ. Ստարքին (առաջնորդ), «Chavs» գրքի հեղինակ Օ. Ջոնսը և գրող ու հեռարձակող Դ. Ս. Միտչելը (հակադրվող մեկնաբաններ): Հաղորդավարն է Է. Մեյթլիսը (մոդերատոր):

Քննարկվող թեման դրդում է մասնակիցներին արտահայտել կտրուկ և իրարամերժ կարծիքներ: Հաճախակի են ընդհատումները և խոսքի համընկնումը: Ստարքին բազմախոսության ամենաառաջին թույլներից փորձում է վերահսկել

---

<sup>3</sup> Couper-Kuhlen, E. (1986). An Introduction to English Prosody. Edward Arnold.

<sup>4</sup> Wichmann, A. (2013). Intonation in Text and Discourse: Beginnings, Middles and Ends. Studies in language and linguistics. Routledge. London and New York.

<sup>5</sup> Bolinger, D. (1989). Intonation and Its Uses. Melody in Grammar and Discourse. Stanford University Press. Stanford, California.

<sup>6</sup> Moeschler, J. (2020). Non-Lexical Pragmatics: Time, Causality and Logical Words. De Gruyter Mouton. <https://doi.org/10.1515/9783110218497>, 293 p.

<sup>7</sup> Ward, G., & Hirschberg, J. (1985). Implicating Uncertainty: The Pragmatics of Fall-Rise Intonation. Language, 61(4), 747–776. <https://doi.org/10.2307/414489>

<sup>8</sup> BBC Newsnight. (2011, August 14). The Whites Have Become Black. [Video]. YouTube. <https://www.youtube.com/watch?v=OVq2bs8M9HM&t=5s>

քննարկումը և ուղղել այն իր նախընտրած հունով: Լսողական վերլուծությունը փաստում է, որ առաջնորդի դերը պահելու նկատառումներով մասնակիցը հաճախ է դիմում **նախաձեռնության չարաշահման** ռազմավարությանը, որը դրսևորվում է երկար, չընդմիջվող խոսքով, հաճախակի հնչող մեկնաբանություններով՝ այս կերպ խախտելով քանակի կարգախոսը:

Ստորև բերված դրվագում կարող ենք տեսնել **սեփական կարծիքը պարտադրելու** մարտավարությունը, որն իրականանում է դանդաղ, հավասարաչափ տեմպով: Դ. Ստարքին, անդրադառնալով Լոնդոնում բռնկված ցույցերին, փորձում է դրանց պատճառը գտնել Մեծ Բրիտանիայում տեղի ունեցող մշակութային խոր փոփոխություններում, մասնավորապես՝ նա նման փոփոխությունները որակում է՝ որպես «սև մշակույթ»: Պնդելով, որ «սև մշակույթն» է հասարակական անհնազանդության պատճառը, Դ. Ստարքին **արհամարհանքով** և **հեզմանքով** խոսում է անհնազանդության դրսևորումներից մեկի մասին: Այս հատվածում նախաձեռնության չարաշահման հնչյունական կաղապարումն արտահայտվում է արտահայտիչ շեշտադրմամբ, երբ ամեն հաջորդ բառը ստանում է արտահայտիչ շեշտ, դանդաղ տեմպ և կայուն ռիթմ: Ուշագրավ է նաև արտահայտիչ դադարը՝ կարևոր տեղեկություն փոխանցելուց առաջ՝ «→ the...`fashion»:

D. Starkey: 'What hap'pened is that a sub'stantial ,section of the ,chavs that ,you ,wrote a ,bout have be ,come ,black. The 'whites have be'come ,black. | **A par'ticular ,sort of "violent, |des"tructive,| and a 'nibi'`listic 'gangster `culture| has be'come** ♪ → **the...`fashion.** And 'black-and-'white, ♪ 'boy and ,girl, ♪ 'operate in this 'language to ,gether. | This → language is 'wholly → false, which is this Ja'maicain `Patois ♪ that's been in'truded in ,England, is and ,this is ,why 'so `many of us have the ,sense of is `literally a 'foreign ,country. ||

Բազմախոսության մեկ այլ դրվագում նա սևամորթների խոսքը համարում է անկիրթ՝ սակայն դիմելով իր խոսակցին՝ Դ.-Ս. Միտչելին (որը սևամորթ է), ասում է. «Դուք նրանց նման չեք խոսում»: Խոսքը ձևակերպված է՝ իբրև հաճոյախոսություն, գովեստ, սակայն, ըստ էության, պարունակում է **թաքնված մտաշահարկում**: Տարանջատում մտցնելով տարբեր խմբերի միջև՝ առաջնորդն օգտագործում է բարձր նախասանդղակ և բարձր վարընթաց տոն: Լինելով բազմախոսության սուբյեկտիվ առաջնորդ և վայելելով հեղինակություն ժամանակակիցների շրջանակում՝ Դ. Ստարքին կարիք չի տեսնում քողարկելու սեփական կարծիքը կամ դիմելու ակնարկների: Նա չի խոսում շտապողաբար կամ ոգևորված: Հակառակը՝ խոսում է դանդաղ, հանդարտ, բայց, միևնույն ժամանակ, **հաստատակամ կերպով** շեշտադրելով կարևոր հատվածները: **Դիմակազերծելով** և **հանդիմանելով** առաջնորդին ակնհայտ մտաշահարկման համար՝ հակառակվող մեկնաբանը հնչեցնում է հոբետորական հարց բարձր վարընթաց տոնով: Քանի որ խոսքը բնույթով կոնֆլիկտային է, այս ռազմավարությունների գորածածությունը

որակի կարգախոսի անտեսման ցայտուն օրինակ է, որը և խախտում է Գրայսի համագործակցության սկզբունքը:

Հետաքրքրական է, որ հակադրվող մեկնաբանը ընդօրինակում է առաջնորդի առողանության տարրեր, այս դեպքում՝ բարձր նախասանդղակը, սակայն խոսքը ծաղրական չէ, այլ փաստարկին հակափաստարկով հակադարձելու նպատակ ունի: Ուշագրավ է այն փաստը, որ հակառակվող մեկնաբանի պատասխանը բացահայտում է առաջնորդի կանխամտածված հարվածը սևամորթներին՝ միևնույն ժամանակ փորձելով Միտչելին առանձնացնել մյուս բոլոր սևամորթներից: Դ. Ս. Միտչելը, հակառակվելով Դ. Ստարքիին, որևէ պահի չի բարձրացնում ձայնը, չի ոտնահարում քաղաքավարության կանոնները: Սակայն խոսքը կոնֆլիկտային է, քանի որ կարծես խոսում է ուսուցանող տոնով՝ փորձելով ամենայն մանրամասնությամբ ներկայացնել իր Ստարքիին հակառակվող տեսակետը: Չայներանգը մնում է զուսպ՝ առանց նկատելի տատանումների:

D. Starkey: 'You don't `talk `like them.||

D.-S. Mitchell: `Them?| Is it `them?| 'This is the `problem. It's a `them and `us `culture.| We `can't keep →thinking of `this as a `them? and `us `argument. We `keep `talking about †different com`munities.‡ You `keep `talking, `David, † about `black `culture. 'Black com`munities are not ho'mogeneous ...‡

Այսպիսով՝ կոնֆլիկտային բազմախոսությունների վերլուծությունը ցույց տվեց, որ այս տիպի բազմախոսություններում պարտադիր կերպով առկա է սուբյեկտիվ առաջնորդ, որը, ի թիվս այլ ռազմավարությունների, փորձում է չարաշահել նախաձեռնությունը՝ այդ կերպ վերահսկելով բազմախոսության թեմաները և քննարկման ուղղվածությունը:

Երկրորդ ենթազխում (*Համագործակցային բազմախոսությունների առողանական նկարագիրը*) դիտարկվում են քաղաքական-հասարակական բազմախոսությունների մասնակիցների կիրառած համագործակցային ռազմավարություններն ու մարտավարությունները:

Հասարակական-քաղաքական կարևոր հիմնահնդիքներից մեկը՝ անօթևանությունը, Մեծ Բրիտանիայում քննարկվում է BBC Newsnight հաղորդաշարի «It's 2016... Why Is There Such a Homeless Crisis?»<sup>9</sup> թողարկման մեջ: Բազմախոսության մասնակիցներն են հաղորդավար Է. Դեյվիսը (մոդերատոր), նախկինում անօթևան, գրող և ակտիվիստ Փ. Նուրը (մեկնաբան), պատգամավոր Ջ. Քարտլիջը (առաջնորդ) և անօթևանության հարցերով զբաղվող բարեգործական կազմակերպության գործադիր տնօրեն Ջ. Սպարկլը (մեկնաբան): Փ. Նուրը և Ջ. Քարտլիջը ներկայացնում են խնդրի երկու բևեռ՝ հասարակ բնակչությանը և իշխանությանը:

---

<sup>9</sup> BBC Newsnight. (2016, October 19). It's 2016... Why Is There Such a Homeless Crisis? [Video]. YouTube. <https://www.youtube.com/watch?v=jAgoAy19Js0&t=8s>

Փ. Նուրը հարց է հղում առաջնորդին՝ վերաբերյալ քննարկել իրեն հուզող թեման: Չնայած հարցի կտրուկությանը՝ Ջ. Քարտլիջը դիմում է համագործակցության: Առաջնորդը մեղմ ուղղում է խոսակցի սխալը և հաշտ, հանդարտ տոնով պատասխանում հարցին: Նա ավելի շուտ մեկնաբանում է հնչեցրած միտքը, քան հակառակվում խոսակցի տեսակետին: Խոսքի հաշտ, համագործակցային բնույթն արտահայտվում է խոսքի կայուն ռիթմով, հավասար իմաստային խմբերով, իլոկուտիվ մեղմացմամբ, միջին հավասար տոնով անավարտ իմաստային խմբերում: Իսկ առաջնորդի դերը ստեղծվում է միջին հավասար տոնի և աստիճանաբար բարձրացող սանդղակի համադրությամբ, որտեղ կարևոր մտքերը և ռեման ստանում են հատուկ հնչերանգային շեշտադրություն: Դրան նպաստում է նաև աստիճանաբար իջնող կտրված սանդղակը:

Նախադասության մեջ նկատելի չեն բառային, քերականական կամ խոսույթային **հաղորդակցական մեղմացման** օրինակներ, այսինքն՝ տվյալ դեպքում վերջինս իրականանում է միայն հնչերանգային միջոցներով: Բառաքերականան և հնչերանգային միջոցներն ունեն հակադիր գործառնություններ: Չնայած այն փաստին, որ նախադասությունն ունի ժխտական կառույց՝ «I'm 'not a → minister...»<sup>10</sup>, Chairman of...», այն կտրուկ չէ. չկա հանդիմանություն կամ մեղադրանք: Խոսակցից շտկում է դիմացինի սխալը՝ առանց նրան հեղինակագրկելու: Նախադասության կառույցի կտրուկությունը մեղմվում է միջին հավասար տոնի և մեղմ, բարյացակամ ձայներանգի շնորհիվ:

P. Noor: If 'I can 'put in the `question,| if 'I can put the `question `back to the ,Tory `minister: 'is 'housing a ↑basic 'human ,right?|]

**J. Cartledge: I'm 'not a → minister... չէ Chairman of... 'all-'party ,group.**

Երրորդ ենթադրույթում (*Խառը տիպի բազմախոսություններ*) քննարկվում են այն բազմախոսությունները, որոնք հնարավոր չէ դասել զուտ կոնֆլիկտային կամ համագործակցային բազմախոսությունների դասերին: Dateline London<sup>10</sup> թոք-շոուի 2015թ.-ի ապրիլի 25-ի հաղորդման մի հատվածը նվիրված է հայոց ցեղասպանության հարյուրամյակին: Տվյալ բազմախոսությունը նույնպես չի կարելի համարել ո՛չ համագործակցային, ո՛չ կոնֆլիկտային: Բազմախոսության մեջ ներգրավված է հինգ մասնակից՝ հաղորդավար Գ. Էսլերը (մոդերատոր) և հյուրերը՝ Ն. Ռամդանին (հակադրվող մեկնաբան)՝ ավժիրցի գրող և լրագրող, Մ. Ռոշը «Le Soir» թերթից, Ս. Թիմուրը BBC-ի թուրքական ծառայությունից և Դ. Արոնովիչը «The Times» թերթից (համագործակցող մեկնաբաններ):

Քննարկման թեման՝ հայոց ցեղասպանությունը, նուրբ և վիճահարույց հարց է: Այդ պատճառով քննարկման ժամանակ մասնակիցները խուսափում են կտրուկ խոսքերից: Նրանք հաճախ դիմում են **հաղորդակցական մեղմացման**, որը

<sup>10</sup> Dateline London. (2015, April 29). April 25, 2015. [Video]. YouTube. <https://www.youtube.com/watch?v=wKckdtyDN3E&t=4s>

հետաքրքիր հնչերանգային նկարագիր է ստանում մոդերատորի խոսքում, իսկ վերջինս փորձում է գտնել համապատասխան պիտակ՝ 1915թ.-ի դեպքերը որակելու համար: Ակնհայտորեն նա տատանվում է, փորձում ճիշտ բառային ձևակերպում տալ մտքերին՝ առանց վիրավորելու հյուրերին կամ հեռուստադիտողներին, որի պատճառով էլ առաջանում են բազմաթիվ դադարներ: Նրա խոսքում առկա են արտահայտչական շեշտ, միջին հավասար տոներ, բարձր վերընթաց տոն, բարձր վարընթաց տոներ: Մոդերատորը գործածում է բարձր վերընթաց ու ցածր վարընթաց տոներ ընդհանուր հարցերի համար:

G. Esler: → D'you...? D'you →think| the 'word `genocide...` uh...| "clearly `matters| to 'some `people...|but 'd'you 'think,| 'given the `facts, the 'facts are... it was hor`rific,| 'whether we 'call it →slaughter,| 'mass →murder, | `genocide, does... ` does that `matter?||

Ամփոփելով կարելի է նշել, որ համագործակցային բազմախոսություններում երբեմն բացակայում է օբյեկտիվ առաջնորդը, և, ըստ այդմ, մոդերատորը հաճախ փորձում է կատարել նաև առաջնորդի դերը: Մասնակիցները գործածում են բազմաթիվ համագործակցային ռազմավարություններ և մարտավարություններ, որոնց հնչերանգային պատկերը լրացնում է բազմախոսության համագործակցային դրվածքին:

Երրորդ գլխի չորրորդ ենթաբաժնում (*Քաղաքական-հասարակական բազմախոսությունների մասնակցիների խոսքի առոգանական միջոցների էլեկտրասակուստիկ վերլուծությունը*) ներկայացվում է մասնակիցների կիրառած ռազմավարությունների և մարտավարությունների հնչերանգային պատկերը՝ ստեղծված լսողական և էլեկտրասակուստիկ վերլուծությունների արդյունքում:


Ավտոսեզմենտ վերլուծությունը ցույց տվեց, որ քաղաքական-հասարակական բազմախոսություններում հաղորդակցական ռազմավարությունների արտահայտման ժամանակ ակուստիկ հատկանիշները՝ բառաքերականական միջոցների հետ մեկտեղ կամ առանձին, հանդիսանում են համագործակցության կամ կոնֆլիկտի ցուցիչներ: Կոնֆլիկտային բազմախոսություններում ՀՏՀ, ձայնածալի և հնչյունային ճնշման ուժի միջին տվյալները նկատելիորեն բարձր են (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Կոնֆլիկտային ռազմավարությունների ակուստիկ ցուցիչները

ՀՏՀ	Ձայնածալայ	Հնչյունային ճնշման ուժ	Տևողություն
306 Hz	15 կտ	82 dB	802 մվ

Դիտարկված առաջին կոնֆլիկտային բազմախոսության «The Whites Have Become Black» առաջնորդի կիրառած նախաձեռնության չարաշահման ռազմավարությունը հետևյալ հատվածում զուգակցվում է **ճնշման ռազմավարության** հետ, որն այստեղ իրականանանում է **նախազգուշացման մարտավարության** գործածությամբ:

## Նկար 1



**A par'ticular sort of "violent, |des"tructive,| and a 'nihil' listic 'gangster `culture| has be'come ♪ →the... `fashion.**

Վոմպյուտերագրանում ներկայացված է դրվագի ակուստիկ պատկերը: Հատվածը բաղկացած է հինգ հնչերանգային խմբից: Առաջին հնչերանգային խումբն արտաբերվում է ամենից բարձր տոնային հաճախականությամբ՝ 314 Hz՝ համեմատելով վերջինի հետ, որն արտաբերվում է 188 Hz: Չայնաձավալը տատանվում է լայնից միջին (13 կտ-ից 10 կտ): Առաջին հնչերանգային խմբում միջուկային տոնի անկման անկյունը միջին կտրուկություն ունի (-2,3 կտ/մվ): Վանկի միջին տևողությունը 288 մվ է, ինչը նշանակում է, որ խոսքի արտաբերման արագությունը ցածր է, ինչը, համաձայն աուդիոտորների, բացատրվում է բազմախոսության առաջնորդի հեղինակավոր խոսքով, հասարակական կարգավիճակով և փորձագիտական գիտելիքով: Նա ցանկանում է գրուցակիցներին համոզել ասածի ճշմարտացիության մեջ:

Հինգ հնչերանգային խմբերն էլ արտաբերվում են մեծ լարվածությամբ՝ 84-86 dB, ընդ որում՝ ամենից բարձրը դիտվում է առաջին և վերջին հնչերանգային խմբերում, որոնք ունեն միևնույն ամենաբարձր լարվածությունը: Աուդիոտորները նշում են, որ հատվածը՝ չնայած արտաբերման դանդաղությանը և արագության տատանումների գրեթե բացակայությանը, հուզականությամբ հարուստ է, մասնավորապես՝ եթե հաշվի առնենք հնչեցված տեսակետի բնեռացնող բնույթը: Դադարները տատանվում են գերկարճից կարճ, ամենից երկարը՝ 382 մվ, որը նախորդում է «gangster culture» բառակապակցությանը: Խոսողը դադար է վերցնում ամենավիճահարույց արտահայտությունն անելուց առաջ: Ամենից կարճ դադարը 192 մվ է:


Վոնֆիլկտային բազմախոսությունների համեմատ՝ համագործակցային բազմախոսություններում կա կոնֆիլկտի լուծման ուղիներ փնտրելու կամ դրանից խուսափելու միտում: ՀՏՀ, ձայնաձավալի և հնչյունային ճնշման ուժի միջին տվյալներն այստեղ ավելի ցածր են (տե՛ս Աղյուսակ 2)՝

Աղյուսակ 2. Համագործակցային ռազմավարությունների ակուստիկ ցուցիչները

ՀՏՀ	Չայնածավալ	Հնչյունային ճնշման ուժ	Տևողություն
214 Hz	13 կտ	74 dB	949 մվ

Համագործակցային բազմախոսության ներկայացված նմուշում՝ «It's 2016... Why Is There Such a Homeless Crisis?», հետաքրքրական է հաղորդակցական մեդիացման արտահայտությունը զուտ առոզանական միջոցներով: Առաջնորդի խոսքում հնչում է **մեդիացում**՝ չնայած քերականական միջոցների կտրուկությանը, որի էլեկտրասիստիկ պատկերը կարելի է տեսնել կոմպյուտերագրամում:

Նկար 2




**J. Cartlidge: I'm 'not a → minister... չ՛ Chairman of... 'all-'party group.**


Երկու հնչերանգային խմբերից առաջինում միջուկային տոնը միջին հավասար տոն է: ՀՏՀ առավելագույն արժեքը 168 Hz է. խոսքն արտաբերվում է միջին ձայնածավալով՝ 7կտ: Երկրորդ հնչերանգային խմբում ՀՏՀ առավելագույն արժեքն ավելի բարձր է՝ 204 Hz՝ համեմատ նվազագույն արժեքի՝ 76 Hz: Ինչպես նկատելի է թվային արժեքներից, ՀՏՀ առավելագույն արժեքը բավականին ցածր է: Խոսքն արտաբերվում է լայն ձայնածավալով՝ 17 կտ: Վարընթաց տոնի անկման անկյունը կտրուկ է՝ 4,3 կտ/մվ: Միջուկային տոներ պարունակող հատվածներն արտաբերվում են բավականին բարձր լարվածությամբ՝ 71-73 dB, որը վկայում է խոսողի բարձր հուզականության մասին: Խոսքն արտաբերվում է միջին արագությամբ, միջին վանկային տևողությունը՝ 196 մվ: Դադարները կարճ են՝ 322 մվ, քանի որ խոսողը հապաղում է շտկել խոսակցի սխալը նրան չվիրավորելու նպատակով:

Հինգերորդ ենթագլխում (*Առողջանական միջոցների քանակական անկարգիչը*) ներկայացվել է հնչերանգային միավորների գործածության քանակական պատկերը (Գծապատկեր 1-3):


Գծապատկեր 1. Միջուկային տոներ



Գծապատկեր 2. Սանդղակներ



Գծապատկեր 3. Դադարներ



Բազմախոսության հնչյունական և գործաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Բազմախոսությունն ունի իր ուրույն տեղը խոսքային հաղորդակցության ձևերի շարքում՝ պարունակելով մենախոսությունից և երկխոսությունից ակնհայտ տարբեր հատկանիշների մի ամբողջ համալիր: Դրանց թվում են՝ ա) հաղորդակցման մասնակիցների քանակական տարբերությունը, բ) հաղորդակցման մասնակիցների որակական տարբերությունները, այդ թվում՝ նրանց հաղորդակցական դերերը, գ) հասցեագրումը և մասնակիցների փոխազդեցության տեսակները, դ) քննարկվող թեմաների և դրանց զարգացման հնարավոր ուղղությունների բազմազանությունը:

2. Ըստ առանձնացված ռազմավարությունների տեսակների՝ քաղաքական-հասարակական բազմախոսությունները բաժանվել են երեք հիմնական խմբի՝ կոնֆլիկտային, համագործակցային և խառը, որոնք միևնույն ժամանակ պարունակում են և՛ կոնֆլիկտային, և՛ համագործակցային բազմախոսությունների տարրեր:

3. Լսողական վերլուծության ժամանակ առանձնացվել են քաղաքական-հասարակական բազմախոսական թոք-շունների մասնակիցների գործածած հիմնական ռազմավարությունները և մարտավարությունները՝ ըստ բազմախոսության մասնակիցների դերերի:

- Կոնֆլիկտային բազմախոսություններում *առաջնորդի* խոսքում ամենից հաճախ դիտվող ռազմավարություններն են՝ նախաձեռնության չարաշահումը՝ ինքնաներկայացման և սեփական կարծիքի պարտադրման մարտավարություններով, հեղինակագրկումը, ինչպես նաև մտաշահարկման, ճնշման և սադրանքի կոնֆլիկտային ռազմավարություններով: *Մոդերատորի* խոսքում հաճախական է մի կողմից հաղորդակցական մեղմացման գործածությունը, մյուս կողմից՝ հեղինակագրկման, մասնավորապես դիմակազերծման մարտավարության գործածությունը: Այս բազմախոսություններում *հակադրվող մեկնաբանները* ամենից հաճախ դիմում են հեղինակագրկման ռազմավարությանը՝ ամբողջ համալիր մարտավարություններով (հեզմանք, դիմակազերծում, հանդիմանություն, վիրավորանք, մեղադրանք, գործի կամ խոսքի արժեզրկում):

- Համագործակցային բազմախոսություններում *առաջնորդի* խոսքում ամենաակնեղն ռազմավարությունը հաղորդակցական մեղմացումն է, ընդ որում՝ առաջնորդը շատ հաճախ դիմում է և՛ իլոկուտիվ, և՛ ցուցչային մեղմացման: Հաճախակի են դիտվում հանդուրժողականությունը՝ երբեմն արտահայտվելով հումորի տեսքով: Համագործակցային բազմախոսություններում *մոդերատորի* խոսքում ամենից ցայտուն դրսևորվող ռազմավարությունը հաղորդակցական մեղմացումն է, մասնավորապես՝ ցուցչային մեղմացումը: *Համագործակցող մեկնաբանները* համագործակցելու իրենց մտադրությունները ակներև են

դարձնում հանդուրժողականության, համերաշխության միջոցով, թեմայի փոփոխության և հաղորդակցական մեղմացման միջոցով:

- Խառը բազմախոսություններում մասնակիցների խոսքում դիտվում են և՛ համագործակցային, և՛ կոնֆլիկտային, և՛ չեզոք ռազմավարությունների մի ամբողջ համալիր:

4. Հնչերանգի ուսումնասիրության գործաբանական մոտեցումը կարողանում է լուծել մի շարք խնդիրներ, որոնք չեն դիտարկվում մինչ-խոսույթային վերլուծության մոտեցումներում, քանի որ վերջիններս հնչյունական ուսումնասիրություններում անտեսում են համատեքստի դերը: Մասնավորապես, հնչյունական-գործաբանական ուսումնասիրությունները առաջարկում են հույզերի և վերաբերմունքի տարանջատման հստակ մոտեցումներ՝ նկարագրելով նաև հնչյունական կողմը:

5. Ավտոսեգմենտ վերլուծությունը հաստատում է լսողական վերլուծությունների տվյալները՝ վերհանելով միջուկային տոնի, բարձրության և խոսքի արագության համահարաբերականները՝ ի դեմս ՀՏՀ-ի, հնչյունային ճնշման ուժի և տևողության, և ներկայացնել դրանք թվային տվյալների տեսքով:

7. Հնչյունական-գործաբանական վերլուծության համար ելակետային է այն վարկածը, որ քաղաքական-հասարակական բազմախոսություններում մասնակիցների գործածած ռազմավարությունների և մարտավարությունների լեզվաբանական համահարաբերականները կարող են արտահայտվել՝ 1. քերականական և հնչյունական միջոցներով, 2. բառային և հնչյունական միջոցներով, 3. գուտ հնչյունական միջոցներով, որոնք գործում են մեկուսի և հակասում են քերականական և բառային միջոցներին, 4. գուտ բառաքերականական միջոցներով, երբ առոգանությունը կա՛մ հակադրվում է բառաքերականական միջոցներին, կա՛մ չեզոք է:

8. Հնչյունական վերլուծության արդյունքում վեր են հանվել կոնֆլիկտային և համագործակցային բազմախոսություններում մասնակիցների գործածած ռազմավարությունների և մարտավարությունների հնչերանգային առանձնահատկությունները՝ առանձնացնելով միջուկային տոնի, այդ թվում՝ միջուկային տոնի տարբերակների (օրինակ՝ բարձր վարընթաց տոնի, նախնական վերընթացությամբ բարձր վարընթաց տոնի) սանդղակի, նախասանդղակի նկարագրությունը, արտահայտչական շեշտերի դերը, խոսքի արագության և դադարների առանձնահատկությունները, ռիթմի փոփոխությունները, ինչպես նաև ձայներանգը՝ հաղորդակցական նպատակին հասնելու տեսանկյունից:

Ատենախոսության շրջանակներում ներկայացված վերլուծությունները չեն սպառում ուսումնասիրության նյութի հետազոտական հնարավորությունները, քանի որ հետագա ուսումնասիրությունը կարող է անդրադառնալ այլ տիպի քաղաքական հաղորդումներին, ինչպես, օրինակ, բանավեճերին կամ հարցազրույցներին:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակումներում՝**

1. Աղաբեկյան Մ. Բազմախոսությունը՝ որպես հաղորդակցման ձև և դրա կարգավիճակը: Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Բանբեր, Բանասիրություն, լեզվաբանություն 1(32), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2015, 45-54:
2. Աղաբեկյան Մ. Թոք-շոուի ժանրային առանձնահատկությունները: Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Բանբեր, Բանասիրություն, լեզվաբանություն, 1(34), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2015, 35-50:
3. Աղաբեկյան Մ. Հասցեագրման տեսակները բազմախոսություններում: Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Բանբեր, Լեզվաբանություն և բանասիրություն 1(44), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2018, 37-54:
4. Աղաբեկյան Մ. Բազմախոսության դերային կառուցվածքի հիմնախնդրի շուրջ: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Բանբեր, Լեզվաբանություն և բանասիրություն 1(58), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2021, 25-37:
5. Աղաբեկյան Մ. Բազմախոսություններում հաղորդակցական փափկացման՝ որպես ներդաշնակ հաղորդակցության ցուցչի հնչյունագործաբանական առանձնահատկությունները: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Բանբեր, Լեզվաբանություն և բանասիրություն 1(60), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2022, 13-28:
6. Աղաբեկյան Մ. Չայներանգի դերը հասարակական-քաղաքական բազմախոսություններում հիմնական ռազմավարությունների արտահայտման մեջ: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Բանբեր, Լեզվաբանություն և բանասիրություն 1(62), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2022, 27-41:
7. Aghabekyan, M. Acoustic Correlates of Communicative Strategies in Socio-Political Polylogues. Современное профессиональное образование, 12, 2025, 322-325:

## МАНАН ПАЙКАРОВНА АГАБЕКЯН

### ФОНОПРАГМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОЛИЛОГА (НА МАТЕРИАЛЕ БРИТАНСКИХ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ТОК-ШОУ)

#### РЕЗЮМЕ

Настоящая диссертация посвящена исследованию особенностей полилогов на материале британских общественно-политических ток-шоу 2011-2024 гг.

**Цель** работы — выявить лингвистические и экстралингвистические особенности сложного коммуникативного и лингво-культурного феномена полилога, определить и описать просодические средства, с помощью которых говорящий реализует коммуникативные стратегии и тактики на примере общественно-политических ток-шоу.

Для достижения цели исследования были поставлены следующие **задачи**:

1. рассмотреть типы речевой деятельности: монолог, диалог и полилог, выделить их особенности,

2. выделить теоретические основы полилога как отдельной единицы речевой деятельности,

3. изучить полилог в политической речи, в частности, в ток-шоу общественно-политического характера,

4. определить ролевые статусы участников общественно-политического полилога,

5. выявить стратегии, характерные для кооперативного и конфликтного видов полилога,

6. установить просодические маркеры кооперативного и конфликтного полилога, определить зависимость просодических особенностей полилогической речи от ролей участников, выявить корреляцию лексико-грамматических и просодических средств.

**Научная новизна** работы обусловлена систематическим описанием просодических особенностей групповой коммуникации. В работе противопоставляется триада форм речевой деятельности — монологическая, диалогическая и полилогическая, представлена классификация телевизионных речевых жанров, выделены лингвистические и экстралингвистические особенности жанра ток-шоу, а также рассматривается ток-шоу как полилогическое явление. В результате исследования выделены дикурсивные стратегии и тактики кооперации и конфликта, используемые в общественно-политической речи в ходе полилогической устной коммуникации, а также их основные просодические маркеры.

Несмотря на то, что грамматические, лексические и дискурсивные особенности политической речи получили широкое освещение, просодической роли полилога уделялось меньше внимания. В работе предпринята попытка выявить

прагматическую роль просодии, в частности, компенсаторную и автономную, в политической полилогической речи.

**Актуальность** работы обусловлена растущим интересом к особенностям многосторонней коммуникации, в частности, к взаимосвязи просодических и прагматических средств, обеспечивающих эффективное взаимодействие участников, а также недостатком исследований фоно-прагматических особенностей групповой коммуникации. Значимость исследования обусловлена также растущим интересом современного общества к жанру ток-шоу, и особенно общественно-политических ток-шоу. Правильное использование коммуникационных стратегий является одним из ключей к успешной коммуникации как внутри общества, так и на международном уровне.

**Теоретическая ценность** исследования заключается в дальнейшем разработке проблемы моделирования телевизионных речевых жанров с учетом интерактивного характера телевизионной коммуникации. Работа обосновывает зависимость просодических средств от социально-ролевых и психологических характеристик участников групповой коммуникации. В ходе исследования были выявлены и сгруппированы стратегии и тактики кооперативной и конфликтной речи, а также тональные средства их реализации, в зависимости от коммуникативных ролей участников диалога.

**Практическая ценность** работы заключается в том, что результаты исследования могут быть использованы в курсах общей лингвистики, прагматики, теоретической и практической фонетики, медиадискурса, а также в специализированных курсах, посвященных проблемам фонологии. Данная работа может способствовать повышению уровня коммуникативной компетенции коммуникантов в медиaprостранстве, особенно в случае поликультурного общения, нейтрализую коммуникативные барьеры.

Ценность работы определяется междисциплинарным подходом, который объединил концептуальную систему и **методологию** таких направлений, как теория групповой коммуникации, прагматика, теория речевых актов, конверсационный анализ. Междисциплинарный подход позволил сосредоточиться на таких социальных, психологических, прагматических, идеологических факторах, которые определяют кооперативную или конфликтную коммуникацию участников диалога и его просодическое описание. В зависимости от характера исследования использовался комплекс методов, а именно дискурсивный и прагматический виды анализа, фонетический анализ (перцептивный, аудиторский, электроакустический с использованием программы Praat v. 5.1), а также количественный метод обработки данных, с последующей лингвистической интерпретацией полученных результатов.

## MANAN PAYKAR AGHABEKYAN

### PHONO-PRAGMATIC FEATURES OF POLYLOGUES (ON THE BASIS OF BRITISH SOCIO-POLITICAL TALK SHOWS)

#### SUMMARY

The dissertation analyses phono-pragmatic features of polylogues on the basis of British socio-political talk show broadcasts (spanning the period of 2011-2024).

The **aim** of the study is to identify the linguistic and extralinguistic features of the complex communicative and linguocultural phenomenon of polylogue, and to analyse the prosodic markers of communicative strategies and tactics employed in the socio-political talk shows.

To achieve this goal, the following **objectives** have been set forth:

1. To examine the three types of speech activity: monologue, dialogue, and polylogue, and highlight their characteristics;
2. To outline the theoretical foundations of polylogues as a separate unit of speech activity;
3. To study polylogues in political speech, particularly in socio-political talk shows;
4. To determine participant roles in socio-political polylogues;
5. To identify strategies employed in cooperative and conflict polylogues;
6. To establish prosodic markers of cooperative and conflict polylogues, to reveal the dependence of the prosodic features of polylogical speech on the roles of the participants, and to determine the correlation between lexico-grammatical and prosodic means.

The **novelty** of this work lies in its systematic description of the prosodic characteristics of group communication. The study contrasts the three forms of speech activity: monologues, dialogues and polylogues, presenting them as a triad; discusses the classification of television speech genres; highlights the linguistic and extralinguistic features of the talk show genre, and examines talk shows as a polylogical phenomenon. As a result of the analysis, discourse strategies and tactics of cooperation and conflict used in socio-political polylogues and their prosodic markers were identified.

Although the grammatical, lexical, and discourse features of political speech have been widely studied, less attention has been paid to the prosodic aspect of polylogues. The study attempts to examine the pragmatic role of prosody, both compensatory and autonomous, in political polylogues.

The **relevance** of this work stems from the growing interest in the characteristics of multi-party communication, namely the interrelationship between prosodic and pragmatic means that facilitate effective interaction between participants, as well as the scarcity of research on the prosodic characteristics of group communication. The

significance of this study proceeds from the increasing interest of the modern society in the talk show genre, in particular in socio-political talk shows. The proper use of communication strategies is a key factor for successful communication at both societal and international levels.

**The theoretical value** of the analysis lies in the further development of models of television speech genres, considering the interactive nature of telecommunication. The study substantiates the dependence of prosodic means on the social and psychological characteristics of the participants in group communication and distribution of their roles within the polylogue. The study identifies and classifies strategies and tactics of cooperative and conflict interaction, along with their prosodic modelling, based on the roles of polylogue participants.

**The practical significance** of the study is determined by the fact that its findings can be implemented in courses on general linguistics, pragmatics, theoretical and practical phonetics, media discourse, as well as in specialized courses in phonology. The work can also contribute to the development of speakers' communicative competence, particularly in the context of multilingual communication. This, in turn, will help overcome communication barriers.

The interdisciplinary approach, which combines the conceptual framework and **methodology** of such fields as pragmatics, speech act theory, and conversational analysis, allowed us to focus on the social, psychological, pragmatic, and ideological factors that determine the cooperation or conflict polylogues and their prosodic markers. Depending on the nature of the study, a combination of approaches was applied, including discourse and pragmatic analyses. Phonetic analysis included perceptual, auditory, and electroacoustic (Praat v. 5.1) methods, followed by quantitative data processing and linguistic interpretation of the results.

